

ՏՈՐԹ-2

Արմենի ծննդյան տարեդարձին կմասնակցի M կամ N մարդ (այդ թվում նաև Արմենը), որոնց Արմենը տորթ կհյուրասիրի: Պահանջվում է որոշել, թե նվազագույնը քա՞նի մասի պետք է բաժանել տորթը, որպեսզի վերը նշված երկու քանակների դեպքում էլ բոլորին հասնի նույն քանակությամբ:

Մուտքային տվյալներ

Մուտքի միակ տողում տրված են երկու ամբողջ թվեր M, N ($1 \leq M, N \leq 30000$):

Ելքային տվյալներ

Միակ տողում պետք է արտածել որոնելի թիվը:

Օրինակներ

N°	stdin	stdout
1	2 3	4
2	2 4	4

Դիտողություն. Առաջին օրինակում տորթը պետք է բաժանել հետևյալ մասերի $1/3$, $1/3$, $1/6$, $1/6$: Եթե խնջույքի մասնակիցները երկուսն են, ապա նրանցից յուրաքանչյուրը պետք է ուտի $1/3+1/6$, իսկ երեք մասնակցի դեպքում $1/3, 1/3, 1/6+1/6=1/3$: